Ներդրումային ծրագիր-առաջարկ

Մյասնիկյան համայնքում հանգստի գոտու տարածքում հյուրատների, լողավազանի և հայկական հացատան կառուցում

_____

(Ներդրումային ծրագրի անվանումը)

Ամփոփ նկարագիր

Ամփոփ նկարագրել ներդրումային ծրագիր-առաջարկը, մասնավորապես՝ ներդրման ոլորտը, արտադրվող ապրանքը կամ տրամադրվող ծառայությունը, հիմնական սպառման շուկաները, ներդրման տեսակը (նոր ձեռնարկություն, գործող ձեռնարկության ընդլայնում, գործող ձեռնարկության վերապրոֆիլավորում), ներդրման համար նախատեսվող /նախընտրելի/ տարածաշրջանը. մարզը, համայնքը: Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը, այդ թվում մասնավոր ներդրողի, այլ ներդրողների (եթե կան) ներդրումը և ակնկալվող աջակցությունը:

«Պարգև Ոսկանյան» ՍՊԸ-ն Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի Մարշալ Բաղրամյան զորավարժարանի հարևանությամբ ունի որոշակի տարածք, որտեղ կատարել է 20 մլն դրամի հասնող կառուցապատման աշխատանքներ՝ նպատակ ունենալով ստեղծել հարմարավետ հանգստյան գոտի գյուղական տուրիզմը զարգացնելու համար: Տարածքում կան բավականին հարմարավետ տաղավարներ, որոնց առընթեր հոսող գետի վրա տեղադրված են երկաթյա կամուրջներ: Տնկվել են մեծ քանակությամբ ծառեր, ինչպես նաև ապահովված է էլեկտրականությամբ (հոսանքի գիծը և տրանսֆորմատորը պատկանում են ընկերությանը): Հանգստի գոտին գտնվում է Երևան-Արմավիր-Գյումրի մայրուղու վրա, հեռավորությունը Երևանից 60կմ է, իսկ Գյումրի քաղաքից՝ 70կմ: Այստեղ զբոսաշրջիկները հաճախ են ժամանում, ուստի հանգիստն էլ ավելի հարմարավետ կազմակերպելու համար տարածքին անհրաժեշտ են 2 քարից քոթաջային հյուրատներ, լողավազան /60քմ/, հացատուն, որտեղ կմատուցվեն հայկական ուտեստներ՝ հատկապես հանրապետությունում իր տեսակի մեջ անգերազանցելի ձմերուկ:

Ներկայիս հացատունը ժամանակավոր կառույց է, հավաքովի կոնստրուկցիաներից, նախատեսվում է նույն տեղում կառուցել քարից 180քմ մակերեսով շինություն, որը կծառայի, որպես խոհանոց և հացատուն՝ իր բոլոր հարմարություններով:

Մյասնիկյան համայնքը գտնվում է Արմավիրի մարզի Բաղրամյանի տարածաշրջանում և առավելություններից է ամռան ամիսներին մշտական մեղմ քամիները, զով եղանակը, ցուրտ գիշերները, որը արմավիրյան տապից պատսպարվելու յուրահատուկ վայր կարող է դառնալ:

Այդ ճանապարհը հանդիսանում է կապող ուղի դեպի Շիրակի և Արագածոտնի մարզերի մի շարք պատմամշակութային վայրեր, և այս հանգստյան գոտին հանդիսանում է նաև Երևանից-Գյումրի երթուղու կանգառ, որտեղ իջևանում են զբոսաշրջիկները, հանգստանում և շարունակում ճանապարհը:

Բացի այդ, հանգստի գոտու հարևանությամբ գտնվող Բաղրամյանի զորավարժարանի հանգամանքը ևս ավելացնում է ինչպես գրավչությունը, այնպես էլ այցելությունների թիվը, մանավանդ վարժանքների, զինվորների ծնողների հետ տեսակցությունների օրերին:

Պլանավորվում է նաև ձմռան ամիսներին կազմակերպել հանգիստ՝ առաջին անգամ դահուկային մարզաձևի սիրահարների համար, քանի որ տեղանքը նպաստավոր է դահուկային ուղի կառուցման համար:

Նախատեսվում է.

- 2 հյուրատան կառուցում՝ քարից, 1 հարկանի, 90-100քմ մակերեսով՝ յուրաքանչյուրում 1 երկտեղանոց և 1 երեք տեղանոց համարներով -9.0 մլն դրամ

-Սարք-սարքավորումների ձեռք բերում և կահավորում -3.0 մլն դրամ

-Լողավազանի (ցայտաղբյուրով) կառուցում՝ 30մx10մ=300քմ -3.5 մլն դրամ

-Հացատան կառուցում՝ քարից, 180քմ մակերեսով, սարք-սարքավորումների ձեռք բերում և կահավորում -19.5 մլն դրամ:

1. Ներդրման նկարագրություն

1.1. Ներդրման գումարը - ***35.0 մլն ՀՀ դրամ***

- *Պահանջվող ամբողջ գումարը* - ***35.0 մլն ՀՀ դրամ***
- *Այլ ներդրողներ*
- *Նկարագրել ներդրման տեսակը՝* ***գործող ձեռնարկության ընդլայնում կամ աշխատանքների վերսկսում:***

Գործող ձեռնարկության ***ընդլայնման*** *կամ վերսկսման դեպքում նշել՝*

- *Ձեռնարկության անվանումը* -***«Պարգև Ոսկանյան» ՍՊԸ***
- *Գտնվելու վայրը, եթե նոր արտադրական հզորություններ են կառուցվելու՝ դրանց գտնվելու վայրը* ***-ՀՀ Արմավիրի մարզ, Մյասնիկյան համայնք***
- *Ձեռնարկության ընդհանուր նկարագրությունը, ներկայումս կամ նախկինում իրականացվող գործունեության տեսակները -*
- *Սեփականատեր (սեփականատերեր)* -***Արսեն Ոսկանյան***
- *Կազմակերպա-իրավական տեսակը****-սահմանափակ պատասխանատվություն ընկերություն***
- *Տեղեկություններ ձեռնարկության տնօրենի վերաբերյալ՝ կոնտակտային տվյալներ -* ***Արսեն Ոսկանյան, հեռ. +374-77-40-51-61***
- *Աշխատողների թվաքանակը նախքան ներդրումը և ներդրումից հետո (ձեռնարկության վերաբացման դեպքում՝ նախքան փակվելը)* ***-նախքան ներդրումը աշխատողների թիվը՝ 3, ներդրումից հետո՝ 16***
- *Ընդլայնման տեսակը (նոր արտադրատեսակ/ծառայություն, թե՞ գոյություն ունեցող ապրանքային շարքի ընդլայնում)* -***զբոսաշրջային ծառայության մատուցում ինչպես հայաստանաբնակների, այնպես էլ օտարերկրացի զբոսաշրջիկների համար:***
- *Տեղեկատվություն ձեռնարկության ֆինանսական բեռի (վարկեր, փոխառություններ) և ակտիվների ծանրաբեռնվածության վերաբերյալ* ***-ֆինանսական պարտավորություններ ընկերությունը չունի:***

1.2. Ապրանքի կամ ծառայության նկարագրություն

Ընկերությունը մատուցում է հետևյալ զբոսաշրջային ծառայությունները՝ զբոսաշրջիկների ընդունում, հայկական ուտեստների մատուցում, ժամանցի և հարմարավետ հանգստի կազմակերպում:

2. Շուկայի ուսումնասիրություն

2.1. Ապրանքի/ծառայության շուկայի նկարագրություն

ՀՀ Արմավիրի մարզը զբոսաշրջային առումով քիչ բացահայտված է, հիմնականում թույլ են զարգացած զբոսաշրջային ենթակառուցվածքները, բացակայում են գիշերակացով հյուրատները: Հանգստի գոտու մեծաթիվ այցելությունները մեծապես պայմանավորված են Երևան-Արմավիր-Գյումրի միջպետական ճանապարհի վրա տեղակայված լինելու հանգանաքով:

2.2. *Հիմնական սպառման շուկաների նկարագրություն* ***–***

2.3. Հիմնական մրցակիցների նկարագրություն – ***մրցակիցներ չկան, քանի որ մոտակա բնակավայրերում նմանատիպ որակյալ, հաճելի միջավայրով և քաղաքակիրթ ծառայություններ մատուցողներ չկա:***

2.4. Պահանջարկի դինամիկան հիմնական սպառման շուկաներում

3. Ձեռնարկության մարքեթինգային քաղաքականությունը

3.1. *Գովազդային և առաջմղման քաղաքականություն*

Գովազդն իրականացվում է հրատարակված տուրիստական տեղեկագրի, ընկերության ֆեյսբուքյան և այլ էջերի միջոցով (https://ok.ru/profile/576405849068):

3.2. Տարածման ուղիները -***բուկլետներ, ֆեյսբուքյան էջ, մարզպետարանի և այլ կայքեր:***

3.3. Գնային քաղաքականություն

Ընկերությունը կմատուցի չորս տիպի ծառայություն՝ ֆիքսված գնային պայմաններով, մասնավորապես.

1) իջևանատեղի, կանգառ ճամփորդների համար՝ արագ սնվելու հնարավորությամբ,
2) գիշերակացի հնարավորություն՝ նախաճաշով,
3) ընտանեկան և կոլեկտիվ խմբերի հանգստի կազմակերպում,
4) ձմեռային սեզոնին էքստրեմալ տուրիզմի հնարավորություն՝ դահուկային մարզաձևի սիրահարների համար:

4. Վաճառքի կանխատեսում

4.1. Վաճառքի ծավալներն արտահայտված ֆիզիկական և դրամական միավորներով, 5 տարվա կտրվածքով -----

5. Ֆինանսական հաշվարկներ

5.1. Ինքնարժեքի հաշվարկ -----

5.2. Ակնկալվող շահույթի կամ շրջանառության հաշվարկ 5 տարվա կտրվածքով,

Ընկերությունը ակնկալում է շահույթ մատուցած որակյալ և մատչելի ծառայությունների համար:
Հետագայում կից կտեղադրվի վաճառքի տաղավար, որից ակնկալվում է ստանալ լրացուցիչ եկամուտ գյուղացու ստեղծած բարիքների, հուշանվերների վաճառքից:

5.4. Ներդրումների հետգնման ժամկետ

6. Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

- *Ձեռնարկության կամ ծառայության մատուցման ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վրա,*

  Ծրագիրը կնպաստի համայնքում, մարզում զբոսաշրջության զարգացմանը, ավելի մեծ թվով զբոսաշրջիկներ կայցելեն Մյասնիկյան համայնք և մոտակա զբոսաշրջային վայրեր և հնարավորություններ կստեղծվեն գյուղական, էկո տուրիզմի զարգացման համար, ինչը շատ իրատեսական է Արմավիրի մարզի համար:

- *Նոր ստեղծված աշխատատեղերի քանակը* - ***կստեղծվեն 16 աշխատատեղեր***

7. Պետությունից կամ այլ ներդրողից ակնկալվող օժանդակություն և պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցություն

- ***Հարկային արտոնություններ,***
- ***Փոխառություն, առանց տոկոսադրույքի, 5-6 տարի մարման ժամկետով***
- ***Դրամաշնորհի հնարավորություն:***